# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏ

<<02>> << փետրվար >> 2017 թ N 22

ք. Եղեգնաձոր

## ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ
## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎԱՅՈՑ ՁՈՐԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՂՆԵՐԻՆ ՊԱՐԳԵՎԱՏՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Պետական պաշտոններ զբաղեցնող անձանց վարձատրության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 22-րդ հոդվածի 7-րդ և 8-րդ մասերի, Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6 կետի, <<Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեի մասին>> ՀՀ օրենքի 9-րդ հոդվածի 5)-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 20-ի N 1510-Ն որոշման 5-րդ բաժնի պահանջներով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայողների 2016 թվականի երկրորդ կիսամյակի կատարողականների արդյունքները.

**ԿԱՐԳԱԴՐՈՒՄ ԵՄ՝**

1. Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի, ինչպես նաև աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողներին /հավելված 1/ պարգևատրել Հայաստանի Հանրապետության 2017 թվականի պետական բյուջեով Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի պահպանման ծախսերի <<Քաղաքացիական, դատական և պետական այլ ծառայողների պարգևատրման>> ֆոնդից:

2. Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

Հ.ՍԱՐԳՍՅԱՆ

Հավելված
ՀՀ Վայոց ձորի մարզպետի
2017 թ փետրվարի 2-ի N22կարգադրության

# Ց Ա Ն Կ

Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետարանի աշխատակազմի քաղաքացիական ծառայության գլխավոր պաշտոնների 1-ին ենթախմբի, ինչպես նաև աշխատակազմի ներքին աուդիտի բաժնի քաղաքացիական ծառայության պաշտոններ զբաղեցնող քաղաքացիական ծառայողների

| h/h | Ազգանուն անուն | Պաշտոնը | Կատարողականի արդյունք o/o | Պարգևատրման գումարի չափը |
|---|---|---|---|---|
| 1. | Վարդանյան Շահեն | Ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչության պետ | 99.99 | 225.960 |
| 2. | Հովսեփյան Ազատ | Քաղաքաշինության վարչության պետ | 99.98 | 292.745 |
| 3. | Գևորգյան Խաչիկ | Առողջապահության և սոցիալական ապահովության վարչության պետ | 99.91 | 282.951 |
| 4. | Ղազարյան Արփիար | Կրթության, մշակույթի և սպորտի վարչության պետ | 99.95 | 283.064 |
| 5. | Սիմոնյան Նորայր | ՏԻ և ՀԳՄ հարցերով վարչության պետ | 99.99 | 257.222 |
| 6. | Կարապետյան Հայկ | Քարտուղարության պետ | 99.9 | 282.922 |
| 7. | Ներսիսյան Մարատ | Գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ | 99.9 | 240.647 |
| 8. | Կարապետյան Վասակ | Ներքին աուդիտի բաժնի պետ | 99.8 | 248.098 |
| 9. | Կարապետյան Նորայր | Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ | 100 | 145.202 |
| 10. | Ավետիսյան Հասմիկ | Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ | 100 | 140.403 |
| 11. | Խաչատրյան Խիկար | Ներքին աուդիտի բաժնի գլխավոր մասնագետ | 100 | 132.187 |

ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՂԵԿԱՎԱՐ Կ.ՍԱՀԱԿՅԱՆ